



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

(ստեղծ)

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1885 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ա.

24 ՄԱՅԻՍ 1885



Կ. ՊՕԼԻՍ

1885



# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՆ 1885 ԱՄԻ

ՆԻՍՏ Ա.

24 Մ Ա Յ Ի Մ 1885

ՆԱԽԱԳԱՀ. — Սրբազան Պատրիարք Հայր.

ԱՏԵՆԱՊԵՏ. — Յովհաննէս Էփէնտի Նուրեան. (Առէսօր)

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. — Բացումն Ազգ. Ժողովոյ շրջանի 1885—86 ամի.

Բ. — Վաւերացումն Երեսփոխանական ընտրութեանց.

Գ. — Ընտրութիւն Մայր-Դիւանի.

Ընդ Նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, ատենան բացուեցաւ ժամը 3<sup>1</sup>/<sub>2</sub> ին, ի ներկայութեան 42 Երեսփոխանաց, որոց թիւն ի վերջէ յանգեցաւ 54:

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

Բացումն Ազգային Ժողովոյ շրջանի  
1885—86 ամի

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրն Ազգային Ժողովը բացաւ հետեւեալ Նախագահական ճառով:

Տեսարք Երեսփոխանք Հայոց Թուրքիոյ,

Ազգային Սահմանադրութեան Օրինաց հաստատութեան քսաներորդ չորրորդ ամաց շրջանի փակման նիստին՝ Պատկառելի Երեսփոխանութիւնը ողջունեց զիս առաջին անգամ իբրեւ իւր ընտրած՝ և Թուրքիոյ Հայոց Պատրիարքը:

Այսօր կարգն իմս է՝ ողջունել զՁեզ, Տեսարք Երեսփոխանք: Այսօր՝ երբ քրսան ներորդ հինգերորդ շրջանին բացման առաջին նիստ և առաջին ատեանը կ'սկսի, Երեսփոխանութեանդ՝ զոր այսօր պատիւունիմ բանալու, ողջոյն ընդ Ձեզ և խաղաղութիւն, ողջոյն և խաղաղութիւն Հայոց՝ որ ի մայրաքաղաքիս, ի հայրենի գաւառ:

առս և ի տարաբնակս, հարց եղբարց և որդւոց մերոց սիրելեաց ի Տէր: Այդ բացումը պէտք էր տեղի ունենար Մայիս ամսոյ սկիզբը, սակայն ծանօթ է Ձեզ թէ կարելի չէր այդ, ըստ որում դեռ կատարուած չէր Ձեր նորընտիր Պատրիարքին յՕգոստոսփառ Սուլթանէն ընդունելութեան հանդէսն, Ուստի՝

Նախ և առաջ ուրախութեամբ կը ծանուցանեմ Երեսփոխան Տեարցդ թէ Առատագութ կայսրն մեր Սուլթան-Համիտ-Խան Բ. հաճեցաւ հրաման չնորհել մեզ ի վեց Մայիսի ներկայանալ Նորին Վեհափառութեան և այսու առթիւ ևս յայտարարել իւր Բարձր համակրութիւնը և դուլթն՝ առ Հայ Ազգն. և ես անմիջապէս փութացի յոտս դահոյից Նորին Վեհափառութեան մատուցել ամենխորին հպատակութիւն և ջերմ ու սրտանուէր մաղթանա վասն անդին կենաց Նորին Վեհափառութեան և վասն անասան յարատեւութեան ու պայծառութեան Օսմանեան Գահուն:

Գարձեալ ուրախութեամբ կը ծանուցանեմ թէ՛ Ամենայն Հայոց Կաթողիկոսական ընտրութիւնը կատարուեցաւ ի 21 Ապրիլի ի Ս. Էջմիածին, և միաձայնքուէով Համազգային Ընտրողական Ժողովոյն ընտրուեցաւ Չմիւռնիոյ Առաջնորդ Տ. Մեղքիսեդեկ Արքեպիսկոպոսն: Եւ Վարչութեան որոշմամբ թէ՛ առ Ն. Սըրբազնութիւնն և թէ՛ առ Նախագահն Ընտրողական Ժողովոյն, շնորհաւորական հեռագրեր ուղղեցինք:

Յայտնի է արդէն, Տեարք Երեսփոխանք, թէ՛ իբրև նորընտիր Պատրիարք, չեմ կարող Վարչութեան անցեալ ընթացից նկատմամբ որոշ տեղեկութիւններ

տալ Ձեզ. բայց Վարչութեան կրօնական և Գաղաքական Ժողովներն ինչպէս և Խառն Ժողովն իրենց համարատուութիւնը պատրաստելու վրայ են, զոր պիտի մատուցանեն Պատկ. Ժողովոյդ:

Երեսփոխանական նոր ընտրութեանց մէկ երկու տեղեկագիրք միայն պատրաստ են, զորս կը մատուցանեմ ժողովոյդ ի քննութիւն և ի վաւերացումն. մնացեալ ընտրութիւնները փութացնելու համար պէտք եղած հրահանգները տրուած են:

Իսկ Ելմտական Յանձնաժողովն, որ կարգեալ էր Ազգ. Ժողովէդ և քանի ա միաներէ ի վեր աշխատելով իւր խորհրդաժողովեանց և որոշմանց արդիւնքներն ծրագրած՝ կը փութայ ահաւասիկ իւր տեղեկագրովը մատուցանելու Ժողովոյդ՝ 1885-1886 ամի Ելմտացոյցը, ազգային տրոց Կանոնագրին բարեփոխեալ ծրագիրը և 1886-1887 ամի Ելմտացոյցը:

Արդէն Կրօն. Սրբագումար Ժողովն ներկայացուցած է Ձեզ Ընծայածուայ դասարանի մը հաստատութեան համար ծրագիր մը, զոր Ժողովդ նախաքննութեան յընդէ. նախաքննութեան տեղեկագիրն անշուշտ Ժողովոյդ Դիւանին վրայ պատրաստ է:

Յայտնի է Ձեզ թէ Ազգ. Սահմանադրութեան ինչ ինչ յօդուածոց փոփոխութեան հարկը փորձառութեամբ երեւան ելած է արդէն, որոց վերաքննութիւնը անհրաժեշտ է, սակայն ներկայ ժամանակին մէջ նոյն փոփոխութեանց համար վերաքննութեան ձեռնարկելը Ժողովոյդ իմաստութեան կը թողում: Աւերորդ է յիշեցնել Երեսփոխան Տեարցը թէ՛ ո՛րչափ կարևոր և ստիպողա-

կան են այս ամեն խնդիրներ որք Ձեր քննութեան և որոշման կենթարկին :

Ես իմ մասին՝ պատրաստ եմ համաձայն իմ ուխտին՝ աջակցութեամբ վարչութեան գործադրել այն ամեն որոշումները, որք ի սահմանի Եկեղեցական կանոնաց և Ազգ. Սահմանադրութեան կը բուժարկուին Պատկառելի Ժողովէք : Նոյնպէս առաջարկութեամբ վարչութեան մատուցանել Ժողովոյդ ի քննութիւն և յորոշում այն առաջարկներն որոց պէտք ունի Ազգն իւր յառաջադիմութեան և պայծառութեան համար :

Պատրիարքական պաշտօնի ու պարտաւորութեանց սահմանն է այն Ուխտը զոր կատարեցի, և այն այնչդի սկզբանց անվճար պահպանութիւնը որք կը պարունակին յԱզգ. Սահմանադրութեան, բայց Պատրիարք մը անկարող կը մնայ գործել երբ Ազգ. Երեսփոխանութիւն և վարչութիւնը չեն աջակցիր իրեն. կընդունիմ թէ Պատրիարքն ալ փոխադարձաբար պէտք է աջակցի Երեսփոխանութեան և վարչութեան, և ոգեւորէ ըզնոսա :

Այսպէս համերաշխ պարտակատարութեամբ պէտք է ջանամք գործել յօգուտ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ և Ազգի, որոց պիտոյքներն բազմազան են. գիտեմք և այդ պիտոյքները գոհացնելու համար բազմադիմի ջանքեր եւս եղած են ու կըլլան, կը տեսնեմք, Այդ ամեն այն ջանից արդիւնաւորութեանն համար նոր եռանդ և աշխոյժ պէտք է, ամեն բանէ առաջ աջակցութիւն և որ մեծըն է Աստուածային օգնութիւնը պէտք է. — զի եթէ ոչ Տէր շինէ զՏունն, ի

նանիր վաստակին շինողք նորա —, Ուստի կը մտղթեմ որ Աստուած զօրութեանց տղորմի մեր Ազգին և տայ մեզ ամենեցուն ոգի եղբայրութեան և սիրոյ, ոգի իմաստութեան և փութաջանութեան, ոգի հնադանգութեան և շրջահայեցողութեան, որպէս զի կարող ըլլամք այս Ազգին իրական պիտոյից թափանծել և զայնս հոգալ ընդ հովանաւորութեամբ մեր Օգոստափառ Վեհապետին, Սուլթան Համիտ Բ. Կայսեր, Որոյ հայրական անգին շնորհաց մինն է նաեւ մեր Եկեղեց-Ազգներքին գործոց ազատ վարչութիւնն, առանձինն Սահմանադրութեամբ որ վաւերացեալ է Նորին Կայսերական Վեհափառութեանէն :

Տեսրք Երեսփոխանք Հայոց Թուրքիոյ, գործնէք, և մեր պաշտօնն ու պարտականութիւնը կատարենք, որպէս զի վայելենք խղճի հանդարտութիւն և առաւել եւս մեր ապագայ սերնդեան օրհնութիւնն :

Ես այնպէս կը հաւատամ թէ այս Ազգն աւելի առատ տուրք կուտայ՝ նուէր կուտայ՝ եթէ ուղելու և առնելու եղանակը գիտցուի և մատակարարութիւնը օրինաւորապէս կատարուի. բարիք և առաքինութիւն անցնելու համար հարկ է բարերարները օրհնաբանել և ծառայողները յարգել. յորգոր կը կարգամ հրապարակախօսներուն որ նպատակն Ազգին մէջ այդ ճամբան բանալու, որպէս զի բազմանայ թիւ պարտավճար, անձնուէր և բարերարող անձանց. պատուել արժանաւորութիւններն, յարգել ժրջան աշխատաւորներն, որպէս զի բազմանայ թիւ արժանաւորաց և անձնուէր ծառայողաց, կը կնքեմ խօսքս՝ օրհնե

ըով զՎեհափառ Կայսրն մեր Սուլթան-  
Համիտ-Խան Բ. զսիրելի Ազգն մեր և  
զՊատկառելի Երեսփոխանութիւնը :

Աստուած առաջնորդէ և յաջողէ  
ամենեցունցս , ամէն :

Նախագահական տոյն ճառին սուրտումէն  
յետոյ , Նորին Սրբազնութեան հրաւրանօք և  
Ժողովոյ Հանութեամբ առժամայ Գիւանն կաղ-  
մուեցաւ , երիցազոյն Երեսփոխաններէն Նորու-  
եան Յովհաննէս էֆէնտի՝ Ատենապետ , և  
կրտսերազոյններէն Սըվաճեան Կարապետ է.  
Ֆէնտի՝ Ատենազպիր բարձեւով :

Բ .

Վաւերացումն երեսփոխանական ընտրու-  
թեանց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ . — Առժամայ Գիւանիս  
պաշտօնն է , ինչպէս զիտէք Տեսաք , միմիայն  
Երեսփոխանական ընտրութեանց վաւերացումը  
և Մայր-Գիւանի ընտրութիւնն կատարել :

Ուրեմն ձեռք առնով նախ առաջին խըն-  
դիրն , Ժողովոյդ կը ներկայեմ Երեսփոխանա-  
կան երկու ընտրութեանց տեղեկագրերն , հան-  
դերձ Վարչութեան ծանօթագրով :

Զայտ ասելով Ատենապետ էֆէնտի կը  
հրաւիրէ զԱտենազպիր էֆէնտի ընթեռնուլ  
նախ Վարչութեան ծանօթագրին :

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի  
Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ ,

Մայրաքաղաքիս Թօփ-Գարուի թա-  
ղին կողմէ Երեսփոխան ընտրուած է՝  
Տօքթէօն Յ. Թիրեաքեան էֆէնտի ,

որ իւր յանձնառութիւնն յայտնած է  
զորով :

Եէնի-Գիւղի և Սթէնեայի միացեալ  
Թաղից կողմէ Երեսփոխան ընտրուած է՝  
Սեպուհ էֆէնտի Տէմիրճիպաշեան ,

որու յանձնառութիւնն ապահովեալ է :

Քաղաքական Ժողովն յիշեալ նորըն-  
տիր Երեսփոխանաց ընտրութեան հան-  
գամանքներն քննելով՝ ըստ ամենայնի  
համաձայն կը գտնէ Ազգ. Սահմանադրու-  
թեան արամադրութեանց , և կը փութայ  
ներկայ ծանօթագրով ընտրութեան տե-  
ղեկագրերն և ընտրելոց յանձնառու-  
թեան դրերն ներկայել Պատկառելի Ժո-  
ղովոյդ ի քննութիւն և ի պարտ ու պատ-  
շած տնօրէնութիւն :

Ի գիմաց Քաղաքական Ժողովոյ

Ազգային Կեդրոնական Վարչութեան

Ատենազպիր Վ. Ատենապետի  
ն. Այվազեան Պ. Պապօեան

23 Մայիս 1885  
Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ . — Ինչպէս տեղեկացար  
Վարչութեան ներկայ ծանօթագրէն , Նոր-  
Գիւղ և Սթէնեայի Միացեալ թաղերէն Սե-  
պուհ էֆէնտի Տէմիրճիպաշեան , և Թօփ-Գարուի  
թաղէն Տ. Յարութիւն էֆէնտի Թիրեաքեան  
Երեսփոխան ընտրուած են , որը յայտնած են  
իրենց յանձնառութիւնն գրուորպէս :

Ուստի նախ կը փութամ Նոր-Գիւղ և  
Սթէնեայի ընտրողական Ժողովոյ տեղեկագրին  
և ընտրելոց յանձնառագիրն ներկայել Ձեզ :

Ամենազատիւ Սրբազան Հայր .

Ազգային Պատրիարքարանէն 1084  
թիւ պաշտօնագրով մը ծանուցուեցաւ  
մեզ Նոր-Գիւղ և Սթէնեայ միացեալ



Թաղիցս կողմանէ ընտրուած Երեսօր-  
նական Եղիա էֆէնտի Տէմիրճիպաշեանի  
հրաժարումը , որ միանգամայն հրահանգ-  
կուտար ըստ որոշման Ազգ. Վարչութեան  
Քաղ. Ժողովոյ՝ նոր ընտրութիւն կատարելը

Ըստ այսմ պաշտօնական հրահան-  
գի՝ նախորդ ամսոյ 28ին Ընտրողական  
Ժողով կազմելով յետ ինչ ինչ օրինական  
գործողութեանց, ընտրելաց և ընտրու-  
ղաց ցանկերը կախեցինք երկուց Եկե-  
ղեցեաց բակերը ի տես ժողովողեանն, մի-  
անգամայն « 58 » քուէարկու ազգայնոց  
հրակիրագիր յղեցինք յաջորդ Կիւրակէ  
Խրեանց քուէն բերելու համար :

Ամսոյս 5, Կիւրակէ օրը յետ ա-  
ւարտման Ս. Պատարագի , քուէհամարը  
կատարուելով հետեւեալ արդիւնքն ու-  
նեցաւ , այսինքն 58 քուէարկուներէն  
միայն 48ն մասնակցեցան , յորոց 34ն  
նամակաւ և 14ն անձամբ իւրեանց քուէ-  
ները բերին և յընտրելաց 37 քուէից  
բացարձակ առաւելութեամբ Երեսօր-  
նական ընտրուեցաւ Մեծ. Սեպուհ էֆէն-  
տի Տէմիրճիպաշեան :

Ընտրողական Ժողովս փութաց սոյն  
ընտրութիւն հաղորդել յիշեալ էֆէնտի-  
ին , որոյ ի պատասխան իւր յանձնառա-  
գիւրը ներփակեալ ներկայացնելով Ձերդ  
Բարձր Սրբազնութեան ի գործադրու-  
թիւն ,

Մնամք Ամենախոնորհ յարգանք  
ի դիմաց Ընտր. Ժողովոյ Նոր-գիւղ և  
Սթիւնեայ միացեալ թաղից ,

Նախագահ՝

Մամբրէ Ծ. Վ. Բզնունի

Առեւտրապիր Առեւտրապետ

Ի. Տեմիրճիպաշեան Յարութիւն Ազատորեան

7 Մայիս 1885

ի Նոր-Գիւղ

Արժանապատու Տէր Մամբրէ Վար-  
դապետ Բղնունի , Նախագահ Երես. Ընտ-  
րողական Ժողովոյ Եէնի-Գիւղի և Իսթիւն-  
եայի Միացեալ թաղից .

Շնորհափայլ Տէր ,

Ընկալայ այս անգամ Ձեր Արժանա-  
պատուութեան հրաւերն՝ որով Եէնի-Գիւ-  
ղի և Իսթիւնեայի Միացեալ թաղից հա-  
մար Ձեր Նախագահութեան ներքեւ գու-  
մարեալ Ընտրող. Ժողովոյ միջոցաւ կա-  
կարուած Երեսօրնականական ընտրու-  
թեան արդեամբն՝ մեր ի նոյն պաշտօն կոչուիլն  
ղեկուցանելով մեզ՝ սոյն մասին յանձ-  
նառագիր կը խնդրէիք ի մէջ :

Յիշեալ Երեսօրնականական պաշտօնն  
ըստ օրինի և յիովին կատարելու մեր  
անձնական զբաղմունք և անբաւականու-  
թիւն չներկելով հանդերձ՝ ժողովողեան  
սոյն առթիւ մեզ նկատմամբ արտայայ-  
տած վստահութիւնն յարգելով՝ ներկա-  
յիւս կը խոստանամք մեր յանձնառու-  
թիւնն ի մերովսանն գործակցութիւն Ազգ.  
Երեսօրնականական Ժողովոյ :

Մնամք Ձերդ Արժանապատուութեան

Խորին յարգանք

Սեպուհ է. Տեմիրճիպաշեան

16 Մայիս 1885.

Եէնի-գիւղ

ԱՍՏԵԱՊԵՏ ԷՃ. — Եթէ զխոտուրթիւն ը-  
նող շիպ , ըստ օրինի Ժողովոյդ վաւերացման  
կ'ենթարկեմ՝ Նոր-Գիւղ և Սթիւնեայի Մի-  
ացեալ թաղից Երեսօրնականական ընտրութիւնն :

Ոչ որ զխոտուրթիւն ընելով, Առեւտրապետ  
էֆէնտի քուէի կը զնէ սոյն ընտրութեան օրի-  
նաւորութիւնն , որ ԿԸՆԳՈՒՆՈՒԻ Իմաստօրու-  
թեամբ :

Հետևաբար Նոր-գիւղ և Սթէնեայ Մի-  
սոյեալ Թաղից կազմանէ տգայտին երեսփոխան  
ԿԸ ՀՈՉԱԿՈՒԻ

Սեպուհ-էֆէնտի Տէմիրճիպոլեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԵՃ. — Այժմ կարգն կուգա  
Թօփ-Գարուի երեսփոխանին ընտրութեան վա-  
ւերացման, որոյ տեղեկագիրն և ընտրել-  
ւոյն յանձնառագիրն նոյնպէս Ձեզ կը ներ-  
կայեմ:

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր,

Թաղիս երեսփոխան (հրաժարեալ)  
Տօքթ. Կ. Հինքեարպէյէնտեան էֆ.ի  
տեղ՝ նոր երեսփոխանի մը ընտրութեան  
հրահանգ եկած ըլլալով Պատրիարքա-  
կան Գեր. ֆոխանորդ Հօր կողմանէ, Ապ-  
րիլ 5, Կիւրակէ օր Ընտր. Ժողով գումա-  
րեցաւ և գաղանի քուէարկութեամբ ե-  
րեք անձինք ընտրելի որոշուեցան որք են,  
Մեծ. Տօքթօս Յ. Թիրեաքեան էֆ.  
» Գրիգոր Շամոտանճեան »  
» Երեւում Փափաղեան »

սոյն որոշման համաձայն և հարկ եղած  
ազդարարութեամբ Ապրիլ 14, Կիւրա-  
կէ օր քուէարկութիւնը կատարուեցաւ  
հրապարակաւ Թաղիս Ս. Եկեղեցւոյն մէջ  
որոշեալ ժամուն. քուէարկուաց թիւն  
էր 320, յորոց միայն 95 քուէ ստացաւ  
Ժողովը, և քուէհամարն կատարուելով  
87 քուէիւ Տօքթ. Յ. Թիրեաքեան էֆէն-  
տի երեսփոխան ընտրուեցաւ:

Ընտրական սոյն տեղեկագիրն Ազդ-  
Պատրիարքարանի մատուցանելէ առաջ,  
ընտրելոյն յանձնառութիւնն նախապէս  
ստանալու հարկն զգալով Ընտր. Ժողովս  
սոյն ընտրութիւնն մասնաւոր պաշտօնա-

դրով մը հաղորդեց առ Մեծ. Տօքթ. Յ  
Թիրեաքեան էֆէնտի, և ուրախ եմք  
յայտնել թէ Նորին Մեծապատուութիւնը  
յետ բազում թախանձանաց Ընտր. Ժո-  
ղովոյս, հաճեցաւ ընդունիլ երեսփոխա-  
նական պաշտօնն և գրաւոր յանձնառու-  
թիւն յայտնել:

Արդ, Սրբազան Հայր, ներկայ տե-  
ղեկագիրն մատուցանելով Ձերք Ամենա-  
պատուութեան, կը խնդրեմք որ Բարձր  
Սրբազնութիւնդ բարեհաճի հարկ եղած  
անօրէնութիւնն ու վաւերացումը շնորհ  
ընել, որպէս զի Նորին Մեծապատու-  
թիւնն ստանձնէ իւր պաշտօնն ի գոհու-  
նակութիւն Թաղեցւոց:

Մնամք ամենախոնարհ որդիք  
Նախագահ Ընտր. Ժողովոյ Թօփ-Գարուի  
Ստեփան Ծ. Վրդ. Աղճապէկեան  
Ի դիմաց Ընտր. Ժողովոյ Թօփ-Գափուի  
Ատենադպիր Ատենապետ  
Յ. Կարաբեան Աբրահամ Կ. Վարդանեան  
1885 Ապրիլ 28  
Թաղ. Խորհրդարան  
Թօփ-Գարուի

Առ

Արժանապատիւ Տ. Ստեփան Ծ. Վրդ.  
Աղճապէկեան Բարեշնորհ Քարոզիչ և առ  
Պատկ. անդամն Ընտր. Ժողովոյ և Թաղ.  
Խորհրդոյ

Թօփ-Գափուի

Աղնիւ Տեարք,

Մի առ մի առաջի դրած էի ձեր  
առաջին Պատկ. պատգամաւորութեան,  
այն արգելիչ պարագայները որոց բեր-  
մամբ խոյս տալ ստիպեալ էի երեսփո-  
խանական ծանր պաշտօնէն ում պատիւ  
կընէք կոչել զիս, և սակայն փոխանակ

չրկելու ձեր որոշումը, կը վերահաստատէք զայն և ապագային եւս, եթէ քուէարկութիւն լինի, արդիւնքն զարձեւալ նոյն ըլլալ կը ծանուցանէք :

Ազնիւ Թաղեցիք ,

Թէպէտ նոյն են և կը մնան այն պատճառները որք մեկուսի կալ կը սլարտաւորէին զիս ազգ. պաշտօններէ, սակայն այսպիսի պատուարներ և համակըրալից հրաւէրի մ'առջեւ ալ, յետ ոչ սակաւ խորհելոյ, չզիջանի՛ն՝ անկարելի և անքաղաքավար թուեցաւ ինձ :

Վասն շնորհակալու մտօք յանձնառութիւնս կը յայտնեմ ձեզ՝ խոստանալով ջանալ իմովսանն պաշտպան կալ ճըշմարտութեան՝ ուղղութեան և յառաջադիմութեան որոցմէ շեղած չըլլալս գիտէք և որոց համար զարձեւալ պատրաստ եմ զօհողութեանց, եթէ միայն զոհողութեան տանելի սահմանին մէջ մնան իրերը :

Արդիւնաւորութիւն մաղթելով յերկնից

Մնամ մեծաւ յարգանքօք  
Յ. Թիրեաքեան

27 Ապրիլ 1885  
Կէտիք-Փաշա

( Թե՞ր ընթերցե՛ա՛ )

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սոյն տեղեկագրին օրինաւորութեան վրայ ղիտողութիւն ընող կայ :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ. — Խօսք կուրեմ : — Թօփ-Գարաի ընտրողական ժողովոյն տեղեկագրին կը յայտնէ թէ 320 երեսփոխանական ընտրողներէն 93 հոգի մասնակցեք են ճուէարկութեան : Արդ, կը փափաքէք գիտնալ թէ Քաղաքական ժողովն՝ նոյն թաղի

մէջ 320 ընտրողք գտնուին ստուգած է՞ արդեօք, որք ըստ Սահմանադրութեան՝ իրենց ընտրողական իրաւունքն ի գործ դնելու հանգամանքը կրեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութեան ներկայ անդամոց անկէ՛ առ այդ հարկ եղած բացատրութիւնն տալ :

ԹԻՒՂԷՆՏՏՃԵԱՆՆ. ԷՖ. — Հարկ է գիտնալ թէ՛ ց'արդ այդ տեսակ խնդիրներ յարուցուած չեն Ազգ. ժողովոյս մէջ՝ երեսփոխանական ընտրութեան մը վաւերացմանն առթիւ, եւ ժողովս շատ խմատութեամբ վարուած է խոյս տալով այս օրինակ ղիտողութիւններէ, վասն զի երեսփոխանի մը՝ ընտրութեան մասնակցեալ համար հարկ եղած պայմաններն գծող միօրինակ օրէնք մը չունիմք և, կարծեմ՝ որստե՛չ չէ՛ այսօր եղնի Թօփ-Գարաի երեսփոխանին վաւերացման սահման խնդիր յարուցանել :

ԹՅՎՐԵԱՆ Ա. ԷՖ. — Արդէն 320 ընտրողներէն 93ը ճուէարկութեան մասնակցած լինելով, կատարուած ընտրութիւնն ըստ ինքեան օրինաւոր կը նկատուի, բանի որ ըստ անգամ 10-12 բուէով կատարուած ընտրութիւններ այս ժողովն կը վաւերանան առանց որ և է ղիտողութեան : Ուստի ես ալ կը կարծեմ թէ խնդիր յարուցանելն իսկ աւելորդ է :

ՄԻ ՔԱՆԻ ՆՍՍԱՐԱՆՆԵՐԷ. — Այո՛, օրինաւոր է ընտրութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարկ է գիտնալ թէ Իզմիրեան Արքադոնի ղիտողութիւնն, ոչ թէ ընտրելոյն, այլ Ընտրողական ժողովոյ տեղեկագրին մէկ կէտին վրայ էր, ուստի վերտօն կը հրախրեմ Վարչութեան ներկայ անդամք, որ հաճին առ այս հարկ եղած տեղեկութիւնն տալ :

**ՀԱՒԱՅԵԱՆ Բ. ԷՖ.** — (Բ. Ատենապետ Բաղ. Ժողովոյ) Մինչև ց'արդ երեսօխոսանական ընտրութիւնը այս հերպիւս կատարուած են, այսինքն ընտրողաց տուրք տալն կամ չ'տալն չէ նկատուած իբր անհրաժեշտ պայման ընտրութեան: Իսկ եթէ ժողովդ այսուհետև այդ կէտերն բնկելու հարկն կը տեսնէ, խնդիրն կը տարբերի:

**ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ.** — Խնդիրն կարծեմ սխալ հասկցուեցաւ և հետևարար Վարչութիւնն ալ սխալ պատասխան տուաւ:

Թօսի-Գարուի տեղեկագրոյն մէջ 320 ընտրող ցոյց տրուեր է, մինչ Աթլենայ-Ելնի գիւղ և միացեալ Թագերուն մէջ, որք առաջնայն շտաբ կարևոր են, շատ աւելի նուազ: Ուստի այս 320 թիւն չափազանց թուեալով, Իզմիր-լեան Արքազան դիտել տուաւ թէ՛ մի՛ գուցէ սխալամ' մ'եզած լինի. իսկ Քաղաքական Ժողովն փոխանակ մեզ ըսելու թէ ճիշդ է կամ սխալ, ընտրողաց տուրք տալն կամ չ'տալն կը յայտնէ: Ես ալ իմ մասին կը փոփոսբելի որ այս կէտն լուսարանուէր:

**ԱՅՎԱԶԵԱՆ Ն. ԷՖ.** — (Ատենաղապի Բաղ. Ժողովոյ) Մինչև ցարդ Բաղ. Ժողովն իրեն պարտք չէր սեպած երեսօխոսանական ընտրութեանց առթիւ բնկել թաղի մը սահմանադրական ընտրողաց ճիշդ թիւն:

(Զանազան նտարաններէ զարմացական ցոյցեր) .

**ԱՅՎԱԶԵԱՆ Ն. ԷՖ.** — (Շարունակելով) Ըսել կուզեմ թէ՛ ցարդ թաղերու բնակչաց սուրճ մարդահամարն չ'սնենալով ի ձեռնին, Վարչութիւնն չէ կրօած ճշդիւ ստուգել թէ՛ այս ինչ կամ այն ինչ թաղին մէջ բանի՞ ընտրողը կան: Բայց կը յուսամ թէ՛ հետոյ սուս կը ճշտուի այդ կէտն, բանի որ մարդահամարաց օրինաւոր աուսմաններն կը պարտասուին:

**ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ.** — Շահ'տ ցաւալի է տեսնել՝ որ թաղի մը երեսօխոսանական ընտրողաց թիւն գիտնալն՝ Վարչութեան համար նշանակութիւն չկրնար ունենալ:

**Տ. ՄԻՆԱՍԵԱՆ Վ. ՎՐԴ.** — Վարչութիւնն պարտաւոր չէ՛ երթալ խմանալ թէ՛ այս ինչ թաղն քանի՞ ընտրող ունի, քանի որ Թաղ. Խորհուրդը, Քարողիչը և Ընտրողական Ժողովը՝ Վարչութեան կողմանէ իրեւ ներկայացուցիչ՝ կը ճակեմ ընտրական գործողութեանց: Բայի յաստի, Թօսի-Գարուի Թաղն կարծուած էն շատ աւելի բազմամարդ է, և պէտք չէ զարմանալ որ 320 ընտրող սենեայ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Վարչութեան երկու Պատ. անդամաց կողմանէ տրուած բացատրութիւնը բողբովին կը տարբերին, ուստի Դիւանս կը հրահրէ զնոսա որ նախ ճշտեն իրենց այդ բացատրութիւնն:

**ՀԱՒԱՅԵԱՆ ԵՒ ԱՅՎԱԶԵԱՆ ԷՖԲ.** — Այդ տեղեկագիրն յղեցէք մեզ:

**ԹԻԼՊԵՆՏՅԱՆ Ն. ԷՖ.** — Տեղեկագիրն թերութիւն մը չունի և հարկ չկայ վերադարձնելու Վարչութեան:

**ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ.** — Սահմանադրութեան մէջ, ինչպէս գիտէք, բացօթյապէս նշանակուած է ընտրութեան մը օրինաւորութեան համար պահանջուելիք պայմաններն. կարելի է թէ Թօսի-Գարուի մէջ 400 ընտրող ալ գտնուին, բայց նախ և առաջ՝ ինչպէս ըսի, ընտրելոյն հանգամանքներն կը բնառուի: Արդ, այն ընտրութիւնն օրինաւորապէս կատարած է՝ թէ՛ ոչ, Ընտրեալն կը կրէ յանձնի՝ ըստ Սահմանադրութեան՝ անհրաժեշտ եղող հանգամանքներն՝ այս, որպէստև Վարչութիւնն նորա օրինաւորութիւնն կը հաստատէ իւր ծանօթագրով:

Հետևարար սկտք է ունենալ վատահովիտն վարչութեան վրայ և այն ընտրութիւնն այսօր իսկ վաւերացնել :

**ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ.** — Խնդրոյն վրայ վիճաբանութիւնն բաւականէն աւելի երկարեցաւ : Ռատի կը փութամ ներկայացեալ զանազան առաջարկներն ամփոփելով Ժողովոյդ բուէին ենթարկել :

Ոմանք Երեսօխոսանց՝ որոց զլուրը կը գտնուի Խզիլիւնան Սրբազան, Թօփ-Գարուի 320 ընտրուաց թիւն չարազանց դանձրով՝ փախարեցան նախ զխնայ թէ ճիշդ է այն, և առ այս վարչութեան ներկայ անդամք առաջարկեցին իրենց վերադարձնել խնդիրն ի սրատախտանառութիւն : Իսկ մաս մ' Երեսօխոսանք անսրտե՛ջ նկատելով եղած զխտորութիւնն, ուսկից կրնայ ըլլալ որ, ըսին, շատ մը օրինական խնդիրներ ծագի, կառավարիչին նախ վաւերել ընտրութիւնն . իսկ Խզիլիւնան Սրբազանի օրոնս՝ կէտն՝ իբր մասնաւոր խընդիր՝ ուրոյն նկատուելեան անուր :

Ռատի Գիւանիս սրտքն է նախ Խզիլիւնան Սրբազանի առաջարկն բուէի դնել և ապա անցնիլ երկրորդ առաջարկութեան :

**ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ.** — Ատենապետ Էֆէնտի, իմ ըրածս առաջարկութիւն մը չէր, ո՞չ սրբող զխտորութիւնն մը :

**ՀԱԱԼՃԵԱՆ Բ. ԷՖ.** — Ինչպէս որ պահ մ'առաջ յայտնեցինք, մինչեւ ցարդ ընդունուած սովորութեան մը համաձայն՝ ընտրուաց թիւն ստուգելու սկտք չէր տեսնուած, իսկ եթէ Ժողովդ կարեւորութիւն կուտայ այս կէտին, կրնայ եղած զխտորութիւններն յղել առ Խր վարչութիւն :

Գալով Թիրեաբեան Էֆէնտի ընտրութեան, ամեն կերպիւ օրինաւոր է այն, և չեմք կարծեր որ անոր վաւերացումն յետա-

ձգելու սրտաճառ մը կեցած ըլլայ, եթէ լարնդուոյն մէջ տարրեր նկատուներ չկան :

**ՄԵՐԵՆՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ.** — Անձնական դէպի մը համար խօսք կուղմ՝ Ատենապետ Էֆ. : Հաճեցէք արձանագրել տալ անունս :

**ՁԱՅՆԵՐ.** — Փակո՛ւմն վիճարանութեան :

**ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ.** — Ժամ է սրջ, նախ խնդրոյն վրայ վիճարանութեան փախումը բուէի դնել և ապա անցնիլ ընտրութեան վաւերացման խնդրոյն :

Ձայս ասելով, Ատենապետ Էֆէնտի բուէի կը դնէ վիճարանութեան փախումը, որ ԿԸՆԳՈՒՆՈՒԻ 2ի դէմ 23 բուէով :

Ապա Ատենապետ Էֆէնտի Ժողովոյն կամայը կը դիմէ թէ՛ եղած զխտորութիւնքն և վարչութեան սրատախտան լաւէ յետոյ՝ կուղջ՝ վաւերացնել Թօփ-Գարուի Երեսօխոսանին ընտրութիւնն թէ ո՞չ՝ յղել նախ տեղեկագիրն վարչութեան :

Ժողովն բաւական համարելով տեղի ունեցած կարճեաց փոխանակութիւնն, միաստցունութեամբ ԿՈՐՈՇԷ վաւերել Թօփ-Գարուի Երեսօխոսանական ընտրութիւնն :

Հետեւաբար բուէարկութիւն կատարելով, Ժողովն 3 բուէի դէմ միաձայնութեամբ Ազգային Երեսօխոսան ԿԸ ՀՈՁԱԿԷ

Յարութիւն Էֆէնտի Թիրեաբեան  
(Յե՞ր +ու-եղբոր-էեան)

**ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ.** — Քիչ մ'առաջ Մերեմ-Գուլի Էֆէնտի անձնական դէպի մը համար խօսք խնդրեց, ուստի կը հրախրեմ զինքն խօսք անուր :

**ՄԵՐԵՆՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ.** — Այո՛, սրտ մ'առաջ խօսք ուղած էի անձնական դէպի մը համար :

Ըստ որում այս տեսակ բուէարկութիւն մը ծուռ ճամբայ կը բանայ մեզ, բանի որ ար-  
ժանաւոր անձի մը Երեսփոխանական ընտրու-  
թեան տեղեկագրոյն վրայ ու է զխտողութիւն  
ընեն անոր անձնականին դաշիւ կը նկատուի  
ումանց կողմանէ, ուստի արդաւային մէջ այս  
տեսակ զեղծմանց տեղի չտրուելու համար այն  
կէտն ի վեր հանելով, կը խնդրեմ որ զխտողու-  
թիւնս արձանագրուի :

ԹԻՒՂԵՆՏՃԵԱՆ Ն. ԷՖ. — Ս/աւ է,  
չկայ զեղծում :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՅ — Զեղ-  
ծում կայ ըսելն՝ անբաստանել է բոլոր այն Ն.  
բեափոխանք որք քուէ տուին :

ՄԵՐԵՏԻՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ես սրբա-  
րաստ եմ ապացուցանել թէ՛ զեղծում տեղի  
ուենցաւ :

( Աղմուկք եւ շփոթութիւնք )

ԶԵՐԱՋ Մ. ԷՖ. — Օրինական կէտի մը  
վրայ խօսք կուզեմ :

Յսկից անուջ Պատկ. Ժողովոյդ ուշադրու-  
թիւնն հրաւիրած եմ սա իրողութեանն վրայ  
թէ՛ աստ և ի դատաս, ընտրողաց մեծամաս-  
նութիւնն չէ որ կընտրէ զԵրեսփոխանն, այլ  
փոքրամասնութիւնն . ուստի ասոր ի դարման,  
ես սրահանջած եմ որ առաջինն անգամ որ փոք-  
րամասնութեան քուէով կատարուած ընտրու-  
թեան մը տեղեկագրի գայ մեզ, վերադարձը-  
նենք զայն ընտրողաց, որպէս զի մեծամաս-  
նութիւնը մասնակցի քուէարկութեան : Սա-  
կայն իմ այն առաջարկ տողաւին նկատողու-  
թեան անուղած չլինելով, կը խնդրեմ որ հան-  
ուի Գլխական թղթոց մէջէն և ներկայացուի  
Ժողովոյս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պահ մ' յետայ Մայր-

Գլխանի ընտրութիւն պիտի կատարուի, ուստի  
օրինական է որ Զերազ էֆէնտի ընտրելի  
Գլխանին յիշեցնէ իւր զոյս առաջարկ և ան-  
ջընեւ տայ ի խնդրոց կարգ :

(Սոյն սրահան Պէրդիւրեան Ռէթէոս և Յա-  
կար Գուրգէն էֆէնտիք զիր մը կը ներկայեն  
Գլխանին, յորում կառաջարկեն որ՝ Ազգային  
Ժողովն իւր Սրբազան Նախագահի ճառէն ի  
պաշտօնէ տեղեկացած ինելով Տ. Մելքիսեղեկ  
Արքեպիսկոպոսի ընտրութիւնն ի Գահ Կաթն  
զիկոտական, այն արժանաւոր ընտրութեան  
համար յայտնէ իւր գոհունակութիւնն :  
— Ատենուպետ էֆէնտի զխտել տալով թէ՛ առ-  
ժամայ Գլխանին պարտքն է՝ միմիայն Երես-  
փոխանական ընտրութեանց վաւերացումն և  
Մայր-Գլխանի ընտրութիւնն կատարել և, թէ  
այս օրինակ առաջարկներ հարկ է նորընտիր  
Գլխանին ներկայացնել, կը սրբարաստուի  
անցնել Օրակարգի Գրք. խնդրոյն ) :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Օրինական առաջար-  
կութեան մը համար խօսք կը խնդրեմ :

Մեր ներքին Կանոնագրի մէջ կայ յօդուած  
մը որ թոյլ կուտայ այսոր չկատարել ընտ-  
րութիւնն Մայր-Գլխանի : — Արդ, նկատելով  
որ բողոքով Երեսփոխանք կան, որք պիտի  
դադրին ներկայ չըջանիս մէջ և սրայ տեղ նո-  
րեր պիտի յաջորդեն, և այս վերջնոց մէջ  
կրնայ ըլլայ որ աւելի արժանաւորութեան համար,  
ին Մայր-Գլխանի անդամակցութեան համար,  
և նկատելով որ էթէ այսոր մեր քուէն տամք մի  
արժանաւոր Երեսփոխանի, նա եւս դադարելի  
Երեսփոխանաց կարգին մէջ գտնուելով՝ վե-  
րջտան քուէարկութիւն կատարելու հարկն եւ-  
րեւան եղնէ, կառաջարկեմ որ զէթ ԿՅ՝ որ  
յետաձգուի Մայր-Գլխանի կազմութիւնն մին-  
չեւ որ այդ ընտրութիւնք ամբողջապէս աւար-  
տին և նոր Երեսփոխանք գտն բաղժիլ իրենց  
աթոռներն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ մեր ներքին Կա-

նոնազրի՝ առժամայն Գիւտնիս գործն է՝ այսօր իսկ կատարել Մայր-Դիւանի ընտրութիւնն, առանց որոյ, ժողովն չէ կարող ու եւ է խնդիր յանձանցել: Այս մասին օրէնքն բացորոշ է:

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Մեր ներքին Կանոնադրի Գրգ. յօդուածն կը տրամադրէ որ Մայր Դիւանի ընտրութիւնն կրնայ նաև յետաձգուիլ: (Աստ Գորգէն Յ. Էֆէնտի կընթեռնու ներքին Կանոնադրի նոյն յօդուածն): Ուրեմն կը տեսնէք, Տեառք, որ յետաձգելով այսօր Մայր-Դիւանի ընտրութիւնն, մեր ներքին Կանոնադրի հակառակ վարուած չեմք լինիր:

ՆԱՆՍԳԱՀ ՍՐԱՅԱԶԱՆ — Մայր-Դիւանի կազմութիւնն յետաձգելու համար եղած առաջարկութիւնը նախապատիւ չէ, Սահմանադրութենէն, որ որոշ տրամադրութիւն մ'ունի այս մասին: Հարկ է ըստ օրինի Մայր-Դիւանը կազմել այսօր, առանց մնացեալ ընտրութեանց սպասելու, վասն զի այս կերպով գործերը կրնան յետաձգուիլ դեռ մէկ երկու ամիս:

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Ես այնպէս կը կարծեմ թէ՛ Սահմանադրութեան մէջ Մայր-Դիւանի կազմութեան մասին ու եւ յ տրամադրութիւն մը չկայ:

ՋԱՅՆԵՐ — Մայր-Դիւանի ընտրութիւնն կատարուի այսօր:

Սրբազան Նախագահի սոյն յայտարարութեան վրայ և ժողովոյ հաւանութեամբ, Ատենապետ Էֆէնտի կանցնի Օրակարգի Գրգ. խնդրոյ:

Գ.

ԸՆՏՐՈՒՔԻՆԸ ՄԱՅՐ-ԴԻՒԱՆԻ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մայր-Դիւանի ընտրութեան պիտի ձեռնարկեմք այժմ: Ուստի հարկ է նախ բուէհամարի Բնիչներն կարգել և միանգամայն յիշեցնել Երեսփոխան տեառք թէ՛ նախ Ա. Ատենապետի ընտրութեան համար պիտի տան իրենց բուէն, բուէթղթոյն վրայ միայն մէկ անուն նշանակելով:

Չայս ասելով, Ատենապետ Էֆէնտի բուէհամարի քննիչ կը կարգէ միճակաւ՝

Յակոբ	Էֆէնտի	Արշակ
Յարութիւն	»	Պէկեան
Մանուէլ	»	Պէշիրեան
Ռուբէն	»	Պուշկուրեան

և կը հրահրէ շԵրեսփոխան Ա. Ատենապետի ընտրութեան համար իրենց բուէն տալ:

Գուէարկութիւն և բուէհամարն կատարուելով, ստոնց արդիւնքն կը յայտնէ որ Ա. Ատենապետութեան համար 51 բուէարկուաց բուէներէն ստացած են,

Տիգրան	Էֆէնտի	Եուսուֆեան	25	բուէ
Յարութիւն	»	Թիրեաբեան	23	»
Մինաս	»	Չերաղ	1	»
Յարութիւն	»	Մէրեհմ-Գուլի	1	»
Սպիտակ	»		1	»

Գումար 51

Եւ որովհետև բուէարկուաց կէսէն մէկ աւելի բուէ, այսինքն բացարձակ առաւելութիւն ստացող չ'գտնուելով, ժողովն հարկ կը համարի կրկին բուէարկութիւն կատարել առաջի երկու անուանց վրայ: — Սոյն երկորորդ բուէարկութեան մէջ 50 բուէարկուաներէն Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան կատանայ 25 բուէ և Տօք. Յարութիւն Էֆէնտի Թիրեաբեան 23 բուէ:

Հետևաբար Ազգային Ժողովոյ Ա. Ատե-  
նապետ կը հռչակուի՝

**ՏԻԳՐԱՆ ԷՖԷՆՏԻ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ**

ԱՅՏՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ պիտի ձեռնար-  
կեմք երկու Գեր-Ատենապետայ ընտրութեան:  
Քուէթաղթեթուն մէջ պիտի նշանակուի եր-  
կու անուն, որոյմէ առաւելագոյն քուէ ստու-  
ցողն պիտի լինի Բ. Ատենապետ և անկից ան-  
միջապէս նուազ քուէ ստացողն Գ. Ատենապետ:

Քուէարկութիւն և քուէհամարն կատար-  
ուելով, արդիւնքն կը լինի .

**Թիւ քուէարկուայ 49**

Յովհաննէս Էֆէնտի Թորոսեան	28	քուէ
Յարութիւն » Թիրեաբեան	24	»
Գարրիէլ » Նորատունկեան	23	»
Բարսէլ » Հաւածեան	7	»
Քրիստոսաուր » Ղաշարոսեան	3	»
Մինաս » Չերաղ	3	»

և մնացեալ քուէներն ՚՛ անձանց վրայ երկու-  
քէն մինչև մէկ տարածել :

Ատենապետ Էֆէնտի քուէարկութեան ար-  
դիւնքն Ժողովին հաղորդելով, ըստ այնմ Բ.  
Ատենապետ կը ՀՈՒՅԱԿԷ Յովհաննէս Էֆէնտի  
Թորոսեան և Գ. Ատենապետ՝ Յարութիւն Է-  
ֆէնտի Թիրեաբեան :

ԱՅՏՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ պիտի ձեռնար-  
կեմք երեք Ատենապալարաց ընտրութեան, և  
առ այս հարկ է երեք անուն նշանակել քուէ-  
թըղթին վրայ :

Քուէարկութիւն և քուէհամարն կատար-  
ուելով, արդիւնքն կը լինի .

**Թիւ քուէարկուայ 36՝**

Յակոբ Էֆէնտի Գորգէն	20	քուէ
Մինաս » Չերաղ	19	»
Մկրտիչ » Մէլիբեան	14	»
Ստեփան » Տամատեան	12	»
Նշան » Փախողեան	9	»
Աւետիս » Թնիրեան	7	»
Յակոբ » Պօշնակեան	6	»
Ռէթէս » Պէրպիբեան	6	»

և մնացեալ քուէներն ութ անձանց վրայ 2 կ  
մինչև 1 տարածել :

Ատենապետ Էֆէնտի քուէարկութեան  
արդիւնքը ծանուցանելով Ժողովին, ըստ այնմ  
Ա. Ատենապալար կը հռչակէ՝

**ՅԱԿՈՒ ԷՖԷՆՏԻ ԳՈՒՐԳԷՆ**

Երկրորդ Ատենապալար՝ Մինաս Էֆէնտի Չերաղ  
և երրորդ Ատենապալար՝ Մկրտիչ Էֆէնտի Մէ-  
լիբեան :

ՉԵՐԱՂ Մ. ԷՖ. — Քուէարկութենէ առջ  
խնդրած էի իմ պաշտօնակիցներէս որ ինձ  
քուէ չտան, սակայն կը տեսնեմ որ Հակոբակ  
իմ խնդրանց՝ շատերն դարձեալ տուեր են :  
Ուստի կը փութամ յայտնել թէ անհար է ինձ  
ո և է պաշտօն ստանձնել Մայր-Դիւանի մէջ :

ԱՅՏՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրուի Չերաղ  
Էֆէնտիէ որ այս օրհուս հրատարականի խն-  
դիր չյարույցանէ :

Չայս ստելով Ատենապետ Էֆէնտի և յայտ  
նելով թէ՛ ըստ որովման Արքայան Պատրիարք  
Հօր, Ազգային Ժողովոյ Բ. նիստն պիտի դու-  
մարի ութ օրէն, ատենն կը փակէ ի ժամ 6 :

**ԱՌՏԱՄԱՅ ՄՅՈՒՐ-ԴԻՒԱՆԻ**

Առևճուղափր	Ատենապետ
Կ. ԱՐՎԱՅԻՄԵՆ	Յ. ՆՈՒՐԵԱՆ



# Ն Ի Ս Տ Ա.

24 ՄԱՅԻՍ 1885

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՐԱՆՔ

ԿԵՐՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՐԱՆՔ  
ԵԿԵՂԵՍԱԿԱՆՔ

### Ա. Վիճակ

- 1 Սիմէօն Եղա. Սէֆէրեան Բ
- 2 Կարապետ Վ. Բաղրատունի
- 3 Վահան Վրդ. Տ. Մինասեան
- 4 Կարապետ Քահ. Սէթեան

### Բ. Վիճակ

- 5 Խորէն Արթուր. Նար.-Պէշ
- 6 Մատթէոս Եղա. Իզմիրեան
- 7 Յովհաննէս Քահ. Մկրեան Բ Պ
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ Պ

### Գ. Վիճակ

- 9 Յակոբ Վ. Ա. Փախաղեան Բ
- 10 Խորէն Քահ. Փէշիվանեան Բ
- 11 Ոսկի Քահ. Օնանեան
- 12

### Դ. Վիճակ

- 13 Եղիշէ » Արթուրեան
- 14 Յովհաննէս Վ. Արշարունի Բ Պ
- 15 Սահակ Քահ. Տ. Սարգսեան Բ
- 16

### Ե. Վիճակ

- 17 Յովսէփ Վարդ. Արթուրեան
- 18 Գարեգին » Թաթարեան Բ
- 19 Սուքիաս Քահ. Ստեփանեան
- 20 Գարրիէլ » Խանճեան

Բ Բաղրատունի Ստեփանն առջին :  
2 » Երկրորդ :  
Պ » Ըանձուոր պատճառաւ :

ԱՅԵՐԿԱՆՔ  
Ա. Վիճակ

- Գոմ-Գաբու, Կտիկ-Փաշա.  
Եւ Գոմ-Գաբուի դուրս
- 21 Գրիգոր Պէրպէրեան
- 22 Կարապետ Աղարդմաճեան Բ
- 23 Բարթող Քիւրծիպաշեան Բ
- 24 Յ. Մէրեթմ-Գուրի
- 25 Տիգրան Հինքեարպէլյնու.
- 26 Աւետիս Սուրէնեան Բ Պ
- 27 Տօթմ. Արթուրեան
- 28 Գէորդ Արթուրեան Բ Պ
- 29 Յակոբ Եղմէնիճեան Բ
- 30 Յակոբ Գուրգէն
- 31 Խաչիկ Կամարապետ
- 32 Միքայիլ Խանճեան
- 33 Մարտիրոս Երեսերճեան Բ
- 34 Մանուէլ Պէշիբեան Բ
- 35
- 36
- 37

### Բ. Վիճակ

- Պէշիկբաշ
- 38 Բարսեղ Հապաճեան
- 39 Յովհաննէս Քերէտէճեան
- 40 Մեղրոն Պարոնիկեան

### ԵԿԵՂԵՍԱԿԱՆՔ

- 41 Մարուգէ Յրէնկեան Բ Պ
- 42 Պօղոս Էնքերճեան
- 43 Յակոբ Պօշնակեան
- 44

### ԻՆՍՏԻԿՈՒՐԱՆՔ Ս. Խաչ

- 45 Սիմէօն Յէլիկեան Բ Պ
- 46 Գարրիէլ Նորատունկեան Բ

47 Գասպար Գասպարեան  
48

### ԻՆՍՏԻԿՈՒՐԱՆՔ Ս. Կարապետ

- 49 Պօղոս Թորդումեան Բ
- 50 Տրդատ Փախաղեան Բ
- 51 Յակոբ Հաճեան Բ
- 52

### Գ. Վիճակ

- Գասպար-Քաշա
- 53 Գասպար Չերազ Բ
- 54 Գրիգոր Ուշիպէճեան
- 55 Ղազար Հովոսեան
- 56 Յարութիւն Պէլկեան
- 57 Նշան Պօշաճեան Բ
- 58 Վիշէն Օրմանեան
- 59 Սինքերթիմ Մանուկեան Բ
- 60 Համբարձում Մազպուլե.
- 61 Մանուկ Ապանեան Բ
- 62

### ՄԻՋԱԳԻՂ

- 63 Տիգրան Եուսուֆեան Բ
- 64 Մկրտիչ Գաղանճեան Բ
- 65 Մկրտիչ Համբարձումեան
- 66 Ստեփան Տամատեան
- 67

### Պէշգօզ Եւ Ղալաթիա

- 68 Մլըպաշէ Մառիկոնեան Բ
- Գ. Վիճակ
- Քուզկուճուճուք Եւ Իճատիէ

- 69 Մկրտիչ Մէղպուրեան Բ
- 70 Սիմօն Մաքսուտեան Բ

	ԳՆԱՌԱՅԱՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԵՐ	Նիկոմիդիա
71 Գառնիկ Յովակիմեան Բ	Ա. Վիճակ	120 Կարապետ Սիւթլւճեան Բ
72 Կարապետ Հաղարեան Բ	Զմշկաձագ	121 Յակոբ Գորեան
Նարլը-Գաբու	401 Գաղատիա	122 Կարապետ Երէցեան
73 Մինրան Տէօքմէճեան	102 Ատանա	123 Կարապետ Խաչիկեան Բ
74 Եհնի-Մանալի Սամարիոյ	403 Մինաս Զերազ	124 Արփիար Արփիարեան
75 Թօփ-Գափու	104 Մատթէոս Ալէքսանեան Բ	Դ. Վիճակ
76 Էլուպ Ս. Եղիա Ե. Ս. Աստուածածին	405 Եօզղատ	Թեքիրտաղ
77 Գուրու-Զեղմէ	406 Գէորգ Վարդանեան	125 Տիգրան Գ. Սինանեան
78 Կարապետ Սըլաճեան	407 Իգմիր	Կեսարիա
79 Զիար Ե. Պօյաճի-Գիւղ	408 Եգիպտոս	126 Խարբերդ
80 Նոր-Գիւղ Ե. Սրեմիա	409 Աքրահամ Մուրատեան Բ	127 Պալլերեսեր
81 Պալատ	410 Բ. Վիճակ	128 Ստեփան Գօլջեան
82 Մկրտիչ Կիւմլւճեան Բ	411 Պրուսա	129 Ստեփան Փափաղեան Բ
83 Ռէթէոս Թաղէոսեան	412 Երդոկիա	Տիվրիկ
84 Ներսէս Երէցեան	413 Կարապետ Կիւրճեան Բ Պ	130 Նշան Գարազաշ
Քարակեօմրիակ	414 Ամասիա	Զէյրուն Ե. Մարաշ
85 Յովհաննէս Թորոսեան Բ	415 Համբարձում Ալաճաճեան	131 Տրապիզօն
86 Կարապետ Փանոսեան Բ	416 Բալու	132 Ե. Վիճակ
87 Ե. Վիճակ	417 Յովհաննէս Ազնաւորեան Բ	Պաղտատ
Սամարիա	418 Եղեսիա	133 Կարապետ Սէթեան
88 Յակոբ Արշակ	419 Յակոբ Իւթիւճեան	Տիգրանակէրտ
89 Յովհաննէս Նուրեան	420 Մանգրլիս	134 Մինրան Զօպանեան
90 Յուրէն Կիւմլւճէրտան Բ Պ	421 Հաճըն	Վան
91 88	422 Երզնկա	135 Մարկոս Աղաբէրեան
92 89	423 Ռէթէոս Պէրպէրեան	136 Աղբամար
93 90	424 Գ. Վիճակ	Հալեպ Ե. Այնթապ
94 91	425 Կարիւն	137 Սեբաստիա
Քասգիւղ	426 Սերովբէ Ազնաւորեան Բ	138 Մկրտիչ Յ. Մէլիքեան
95 Ռուբէն Պուլիուրեան	427 Քիօթանեսա	Ռուսնուգ
96 Նիկողոս Թիւլպէնտեան	428 Աւետիս Թընկերեան	139 Բաբերդ
97 Նշան Փափաղեան	429 Աղբիանուպօլիս	140
98	430	
99		
100		







# ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. — Բացումն Ազգային ժողովոյ շրջանի 1885 — 86 ամի .

Բ. — Վաւերացումն երեսփոխանական ընտրութեանց .

Գ. — Ընտրութիւն Մայր — Գիււանի .

